Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Մեծամորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի 11 Ժամ ուսուցչի թափուր տեղի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում, մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
- Ինքնակենսագրություն,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։
Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 4-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից։ Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 18-ին՝ ժամը 16:00-ին , ՀՀ Արմավիրի «Գրիբոյեդովի Վաչե Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում։

Տեղեկությունների համար զանգահարել 093 05 78 22 հեռախոսահամարով։

Հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Գրիբոյեդով, Նարդոսի 1